ՀԱՅՔ

Մասնավոր

52-22-30 գովազդային հուսալի կապ

խաչբառ

ՀԵՌՈՒ ՄՆԱՑԵՔ ԱՆԵԾՔԻՑ



Արկածախնդիր Էդմոնդ Շալեն հնդկական լքված տաճարում կուռքի փոքր մի արձանիկ գտավ, որի ճակատին ամրացված էր խոշոր մի ադամանդ: Ուրախացած ֆրանսիացին անմիջապես փորեց-հանեց արձանիկի «աչքը», թեեւ նրա հնդիկ ուղեկիցը արցունքն աչքերին աղաչում էր չանել այդ բանը, որովհետեւ հետեւելու է աստվածների զայրույթը:

Կուրացած կուռքի վրեժը շուտով վրա հասավ. Շալեին եւ նրա ուղեկցին կտոր-կտոր արեցին զայրացած ցեղերը: Ալմաստի հաջորդ տերերը նույնպես մահացան ողբերգական հանգամանքներում:

Քարը ձեռքից ձեռք էր անցնում, ոչ ոքի մոտ երկար չմնալով: Եվ նրա ուղին նշանավորված է խորհրդավոր մահերով եւ դժբախտություններով: Բայց Հոուպի ադամանդից (այն այսպիսի անվանում ստացավ ի վերջո) ոչ ոք հոժարակամ չէր ուզում բաժանվել: Ահա այն մարդկանց ոչ լրիվ ցուցակը, ովքեր ժամանակավորապես տիրացել են քարին եւ դարձել զոհեր.

թուրքական սուլթան Աբդուլ Համիդ - սպանվել է,

իշխան Իվան Կանիտովիցկի - սպանվել է,

ոմն Սիմոն Մոնտարիդես - վախճանվել է կնոջ եւ զավակի հետ միասին, անձնակազմի հետ ընկնելով անդունդը,

ոմն Ժակ Կոլե - կյանքն ավարտել է ինքնասպանությամբ,

օրիորդ Էվալին Մակլին - մեռած է գտնվել սեփական տանը, առանց բռնության որեւէ հետքի: Նա 20 տարեկան էր:

Այժմ ադամանդը պահպանվում է Վաշինգտոնի Սմիթսոնյան ինստիտուտում եւ կոնկրետ տեր չունի: Գուցե հենց այս պատճառով էլ ավարտվեցին մահերը: Իսկ գուցե նաեւ ժամանակը մեղմե՞լ է անեծքի ուժը...

...Պետերբուրգի հռչակավոր գեղեցկուհի Ավրորա Շտերնվալին չար լեզուները «ճակատագրական կին» էին համարում: Եվ դա պատահական չէր: Նրա առաջին ամուսինը մահացավ ողբերգական հանգամանքներում, հարսանիքից մի քանի օր առաջ: Երկրորդ զոհը դարձավ գնդապետ եւ կամերգեր Ալեքսանդր Մուխանովը, Ա.Ս.Պուշկինի մտերիմ ծանոթը: Նա նույնպես իր ձեռքն ու սիրտը առաջարկեց գեղեցկուհուն: Եվ կրկին, հարսանիքի նախօրյակին մահացավ: Երկու տարի հետո Ավրորայի սիրտը գրավեց Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի անդամ Պ.Դեմիդովը: Հարսանիքը տեղի ունեցավ: Բայց շատ կարճ ժամանակ անց Ավրորան այրիացավ:

Իր կյանքի մնացած 48 տարիներին գեղեցկուհի Ավրորան այդպես էլ մնաց այրի, թեեւ մինչեւ մահվան օրը պահպանեց իր հրաշալի գեղեցկությունն ու թարմությունը: Նրա մահից հետո բանաստեղծ Գ.Մասլովը գրեց «Ավրորա» պոեմը, որտեղ այսպիսի տող ուներ. «Եվ բախտը մահվան տաք շրթունքներով է նրան համբուրել...»: Այս պոեմն անգամ անպատիժ չմնաց: Պոեմի վրա աշխատելու ժամանակ Գ.Մասլովը հիվանդացավ եւ մահացավ հիվանդանոցում, մինչեւ վերջին պահը հղկելով բանաստեղծական տողերը...

...Այսպիսի պատմությունների հետ ծանոթանալով՝ այն համոզման ես գալիս, որ բնության մեջ գործում են անտեսանելի հզոր ուժեր, որոնք բառացի կամ մտովի արտահայտված անեծքները դարձնում են նյութեղեն: Ավանդության համաձայն, Ավրորայի մայրը զայրույթի պոռթկման պահին անիծել էր բոլոր տղամարդկանց, ովքեր կհամարձակվեն սիրահարվել իր աղջկան...

Ահա, եւս մեկ պատմություն: Այս անգամ ճակատագրի ձեռքը դիպել էր շատ սովորական ավտոմեքենայի: Լվովի փողոցներից մեկում առանց հսկողության կանգնած է «Ժիգուլի» ավտոմեքենայի մի հին մոդել: Ավտոմեքենայի վերջին տերը՝ Իգոր Կ-ն արդեն վաղուց չի նստում իր ավտոմեքենայի ղեկին:

Երբ տարիներ առաջ Իգորը գնում էր այս ավտոմեքենան, ընկերները նրան նախազգուշացրին, որ ավտոմեքենայի տերերին չար ճակատագիր է հետեւում: Առաջին տերը մահացավ, փոսի մեջ ընկնելով ամենահարթ ճանապարհին: Նա լիովին սթափ էր, եւ ճանապարհին երթեւեկությունն էլ թեթեւ էր: Նրա այրին, նստելով մեքենայի ղեկի առաջ, անմիջապես զգաց, որ ետեւից ինչ-որ մեկը սառցե ձեռքերով գրկել էր իր պարանոցը: Կտրուկ արգելակելով, նա շուռ եկավ: Բայց ոչ ոք չկար: Մտածելով, որ դա իրեն թվացել է, փորձեց առաջ շարժվել: Եվ կրկին անտեսանելի ձեռքերը պինդ սեղմեցին կնոջ պարանոցը: Կինը դուրս փախավ մեքենայից եւ տուն հասավ պատահական մեքենայով:

Հաջորդ տերը շատ գոհ էր ձեռնտու գնումից. նա մեքենան գրեթե ձրի էր գնել... Բայց երկու ամիս նա տանջվում էր հիվանդանոցում (ջարդվել էին ոտքերը) եւ բոլորին փորձում էր հավատացնել, որ անիծված մեքենան պոկվեց ձեռքի արգելակից եւ անցավ իր վրայով:

Մեքենայի հաջորդ տերը մի թոշակառու էր: Նա շատ շուտով սկսեց ծանոթներին ու հարազատներին համոզել, որ մեքենան ուզում է իրեն սպանել, նույնիսկ ամենադանդաղ ընթացքի դեպքում դուրս է գալիս հանդիպակաց կողմը...

Մեքենան, ինչպես թեթեւաբարո կին, ձեռքից ձեռք էր անցնում: Վերջապես նրան տիրացավ Իգորը: Նա, իհարկե, սնահավատական ոչ մի բանի չէր հավատում: Եվ՝ իզուր...

...Ձմեռային մի գիշեր լուսարձակների լույսի տակ Իգորը հանկարծ տեսավ, որ ինչ-որ մեկն իրեն նետեց մեքենայի անիվների տակ: Հենց այդ պահին էլ մեքենան «փչկոտեց» տեղում: Իգորը կանգնեցրեց մեքենան, դուրս թռավ եւ կանգնեցրեց իր ետեւից շարժվող ավտոմեքենան. «Օգնեցեք, ես մարդ գցեցի մեքենայի տակ»: Անծանոթ վարորդը ուշադիր նայեց ճանապարհի ամեն մի մետրը եւ, ոչինչ չհայտնաբերելով, ասաց. «Ի՞նչ է, խելքդ թռցրե՞լ ես...»: Իսկապես, ո՛չ դիակ կար, ո՛չ հետք... Մյուս օրը Իգորը բոլոր սյուների վրա հայտարարություններ փակցրեց. «Վաճառվում է ավտոմեքենա էժան գնով»:

Գտնվեց եւս մի անաստված, որը շատ էժան գնեց ավտոմեքենան: Բայց... երկու-երեք օր հետո վերադարձրեց «Ժիգուլին», ասելով. «Դեւերով եւ ուրվականներով լցված մեքենա ինձ պետք չէ»: Պարզվում է, նրա երեխաները, ուրախանալով հայրիկի ավտոմեքենայով, նստել էին նրա մեջ եւ անմիջապես դուրս փախել. «Հայրիկ, ներսում ինչ-որ ծերուկ կա»: Բնական է, որ հայրը հանելուկային ոչ մի ծերուկ էլ չհայտնաբերեց, բայց մեքենան անմիջապես վերադարձրեց: Ասված չարից փրկի...

Այժմ արդեն մեքենային նույնիսկ առեւանգիչները չեն մոտենում...

Այսպիսի բաներ...

Պատրաստեց ՍԵԳԱՆ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Ստեղծագործության հեղինակի ստեղծած անմիջական օրինակը:
4. Զամբիայի մայրաքաղաքը:
7. Առաստաղի վրա պատրաստված անցք:
10. Գերմանացի կոմպոզիտոր, «Գենովեւա» օպերայի հեղինակը:

13.



16. Քաղաք Արեւելյան Գերմանիայում:
17. Գետ Բալկանյան թերակղզում:
18. Հայ գրող, «Հովազաձորի գերիները» ստեղծագործության հեղինակը:
19. Բանջարաբոստանային մշակաբույս:

23.

24.



26. Բաղադրյալ անվանումների կրճատված մասերով բառակազմության եղանակ:
27. Գետ, որն անցնում է Լիտվայով եւ Բելառուսով:

28.



29. 19-րդ դարի հայ գուսան:
31. Ամիս:
34. Հերոսուհի Ստ.Զորյանի «Խնձորի այգին» պատմվածքում:

35.

37. Իսպանական ֆուտբոլային ակումբ:

39. Նկարի հեղինակը:

41. Հնագույն պետություն Հյուսիս-արեւելյան Աֆրիկայում:
43. Քիմիական տարր:
44. Կենտրոնական նյարդային համակարգի գործունեությունը խթանող դեղամիջոց:
45. Գեղարվեստական եւ պատմամշակութային թանգարան Սանկտ Պետերբուրգում:
47. Ֆրանսիացի կոմպոզիտոր, «Վերթեր» օպերայի հեղինակը:
48. Կոնաձեւ միարմատ ատամ:

49.

50. 10-րդ ամսվա անվանումը հին հայկական օրացույցում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

2. Պատերազմի, արյունահեղության, հիվանդությունների եւ մահվան աստվածը Հին Բաբելոնում:
3. Դերասանի դիմափոխության արվեստը:
5. Ճարտարապետական կառուցվածքային տարր:
6. Ձիթատու բույս:
8. Բակլազգիների ընտանիքի կերաբույս:
9. Գետ Հնդկաստանում:
10. Հայկական միջնադարյան հոգեւոր երգ:

11.

12. Արագ ընթացող քիմիական ռեակցիա, որն ուղեկցվում է ջերմության անջատումով:
14. Շվեյցարացի ֆիզիկոս եւ չափագետ:
15. Խորհրդային ֆիզիկոս, որը հայտնագործել է գերհոսունության երեւույթը:
20. Նյութի փոքրագույն մասնիկ:
21. Խոսքի մաս:
22. Էրոսի մուսան հին հունական դիցաբանության մեջ:
23. Պետություն Հարավային Ամերիկայում:
25. Քրիստոնյա հոգեւորականի սրածայր գլխանոց:
26. Թմրանյութի տեսակ:

30. Նկարի հեղինակը:

31. Եհովա Աստծո անունից առաջացած գուշակող կրոնաքարոզչական քարոզիչ Հին Հրեաստանում:
32. Աշխատանքային որոշակի պարտականությունները միտումնավոր ձախողելը:
33. Քաղաք ԱՄՆ-ում:
34. Նկարիչ, նախշարար:
36. Բանջարանոցային բույս:
38. Քաղաք եւ նավահանգիստ Ադրիատիկ ծովի ափին:
40. Մոսկովյան ֆուտբոլային ակումբ:
42. Ֆրանսիացի թատերագիր, «Դոն Ժուան» ստեղծագործության հեղինակը:
45. Նկարի հեղինակը:

46. Գեղարվեստական ստեղծագործության որոշակի տեսակ:

Կազմեց ՎԱՆԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ 7. Հաղորդիչ: 8. «Մոնումենտ»: 10. Կոստանդին: 11. Ավիզո: 13. Ամիրա: 15. Տակտիկա: 17. Աներ: 18. «Նանա»: 19. Ամրան: 20. Նաիրա: 21. Փլավ: 24. Սակր: 26. Զարմուհի: 29. Ամարա: 31. Արխիվ: 32. Կարկանդակ: 33. Ծիրանենի: 34. Վարարակն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ 1. Շատրվան: 2. Երեկո: 3. «Ֆիեստա»: 4. Կոնդակ: 5. Զուռնա: 6. Նոճարան: 9. Ֆանտա: 12. Զորավար: 14. Մենատեր: 15. Տարազ: 16. Ալիքի: 22. «Լիմուզին»: 23. Սմբակ: 25. Կլինիկա: 27. Ատրանք: 28. Հիդրատ: 30. Ակունք: 31. Ակրատ:

Հիմնադիր եւ հրատարակիչ՝ ՀՀՇ Վարչություն, «ՀԱՅՔ» թերթի խմբագրություն: Գլխավոր խմբագիր ՎԱՐԴԳԵՍ ԴԱՎԹՅԱՆ:
Հասցեն՝ Երեւան 375023, Արշակունյաց 2, 11-րդ հարկ Հեռ. 537709, 527701, 522230: Դասիչ՝ 61119 Գր. վկայական՝ 57 Ստորագրված է տպագրության՝ 24.10.1997: Հղումը «Հայքին» պարտադիր է:
Տպագրվում է «Պարբերական» հրատարակչության տպարանում: Լուսանկարները՝ Ռոյթեր-Արմենպրես, «Հայք»-ի էջադրման ոճը եւ տառաձեւերը՝ Պավել Դալլաքյանի:

ՀՀՇ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1989 ԹՎԱԿԱՆԻՑ
#184 (1010), ԳԻՆԸ՝ 75 ԴՐ.
ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 2, ՀԵՌ. 527701
ARMENIAN NATIONAL MOVEMENT
"HAYK" DAILY
ARSHAKOUNIATS 2
TEL: 527701
E-MAIL: HAYK@ARMINCO.PR.COM

ՀԱՅՔ

Շաբաթօրյա

թ ո ղ ա ր կ ու մ

1997 հոկտեմբեր 25

ՆՊԱՏԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ



Գործ՝ ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

էջ 7

Հիշո՞ւմ եք հանրաճանաչ Օլեգ Պոպովի քմահաճ խաղը լույսի հետ: Ծաղրածուն՝ տարածությունից «որսում» է լույսի շերտը, «տապալում» գետին, հետո ափերով սեղմում է, փոքրացնում եւ «տեղավորում» լուցկու տուփի մեջ: Խավարը լցվում է հրճվագին ծափահարություններով... Այսպես խեղկատակն ու խավարը ճարպկորեն պատժում են Լույսին...

Մեր հասարակությունն իր այսօրվա հոգեվիճակով միաչափանի հասարակություն է: Ապրանքների, զրկանքների, մեծախոսների եւ խաչագողերի ներկա բազմազանության մեջ բոլորիս միավորողը նույնն է՝ *զգացմունքի անորոշությունը:* Ո՛չ ունեւորը, ո՛չ ունեզուրկը, ո՛չ գիտունը, ո՛չ անգետը եւ ո՛չ մեկս չգիտենք տեղն է ծիծաղե՞լ, թե լաց լինել, հրճվե՞լ, թե ողբալ: Չգիտենք, որովհետեւ ոչ ոք (թեկուզ որեւէ ծաղրածու) մեզ չի հրահանգում՝ ե՞րբ ուրախանալ եւ ե՞րբ տխրել: Այս է մեր «պատվով անցյալի» եւ «անպատիվ ներկայի» էական տարբերությունը:

«Ես մտածում եմ, հետեւապես գոյություն ունեմ» սկզբունքը այն հասարակությունների քաղաքական աշխարհայացքի անկյունաքարն է եղել, որոնք այսօր իրենց կամքն են թելադրում աշխարհին: Իսկ մե՞րը... «Ես ասում եմ, հետեւապես գոյություն ունեմ. հետեւանքների համար պատասխանատու չեմ»: Այսպես, մեր ազգային հոգեբանության մեջ բարձրագույն, իմացական ունակությունները օտարելով եւ հաճախ միայն ծայրահեղ բնազդները թեժացնելով, կամա, թե ակամա մեր հավաքական գիտակցությունը պահել ենք մրցաղային վիճակում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՉ Է ԱՆԵԼ

«Մոսկվայում ափսոսանքով են նշում իրադրության նոր սրումը Էգեյան ծովի շրջանում, որի առիթ է հանդիսացել այնտեղ վերջին ժամանակներս ընկալվող ռազմական ակտիվության ուժեղացումը, որն արտահայտվել է մասնավորապես Թուրքիայի ռազմաօդային ուժերի ինքնաթիռների վտանգավոր խուսանավումներով»: Այսպիսի հայտարարությամբ հանդես է եկել ՌԴ արտգործնախարարության տեղեկատվության ու մամուլի տնօրեն Գենադի Տարասովը:

Ռուսաստանը, նշել է նա այդ առնչությամբ, Անկարային եւ Աթենքին կոչ է անում անհրաժեշտ զսպվածություն ու պատասխանատվություն ցուցաբերել, որպեսզի թույլ չտրվի վտանգավոր սրացում այդպիսի զգայուն տարածաշրջանում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԲԱԽՈՒՄՆԵ՞Ր ԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

«Ազադլիգ» թերթը շարունակում է լուսաբանել Ադրբեջանի հյուսիսում ստեղծված դրությունը: Նշվում է «Սադվալի» ֆինանսական աղբյուրների մասին եւ հոլովվում են Ռուսաստանի ու Հայաստանի անունները: Թերթի կարծիքով, Հայաստանի հատուկ ծառայություններից բացի կան նաեւ այլ ուժեր, որոնք ցանկանում են խառնաշփոթություն ստեղծել այդ տարածաշրջանում: Դրանց թվում նշվում են հյուսիսային հատվածի գծով «Սադվալի» կոորդինատոր Մուստաֆաեւը եւ զինյալ խմբավորումներից մեկի ղեկավար Սաբդախովը:

Հաղորդվում է, որ եթե նկատի առնվի այն հանգամանքը, որ Ռուսաստանը չի կարող տիրանալ Կասպից ծովի իրավական կարգավիճակին, ապա հյուսիսում կայունության խախտման հավանականությունը մեծանում է: Հիշեցնենք, որ Ռուսաստանի ներքին գործերի նախարար Կուլիկովը Անվտանգության խորհրդի նիստերից մեկում հայտարարել էր, որ որոշ արեւմտյան երկրներ Ռուսաստանի հարավում ընդհարում են նախապատրաստում ազգային հողի վրա:

Հոդվածում նշվում է, որ վերջին իրադարձություններին Դաղստանի զինյալ խմբավորումների հետ միասին մեղսակից են Մոսկվայի շահագրգիռ շրջանները: Նշվում է Դաղստանի ամենախոշոր զինյալ խմբավորումներից մեկի ղեկավարի՝ Խաչալաեւի անունը: Նա նաեւ համարվում է Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության գործակալը եւ հիմնական թեկնածուներից մեկը եկող տարի Դաղստանում նախատեսված նախագահական ընտրություններում: Հեղինակը նշում է, որ մեկ այլ թեկնածու՝ Աբդուլաշիպովը, շահագրգռված է, որ Կովկասը եւ մասնավորապես Ադրբեջանը պահպանվեն Ռուսաստանի ազդեցության ոլորտում, եւ հաղորդում է, թե ընտրությունների շեմին Դաղստանում իրադարձությունները կարող են զարգանալ մի քանի ուղղությամբ: Հոդվածագիրը նաեւ գրում է, թե «Սադվալի» սպաները ամսական 800 դոլար աշխատավարձ են ստանում, իսկ զինվորները՝ 500 դոլար:

Արմենպրես

անոնս

ՉԱՐԵՆՑԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ՉԱՐԵՆՑ-100

...Գուցե ճիշտ որ՝ միրաժ է Նաիրին. ֆիկցիա, միֆ. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն... Իսկ նրա փոխարեն-կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան...

էջ 12

ԻՆՉՊԵՍ ՓԱԿՎԵՑ ՆԱԻՐԻՏԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եվ ահա հենց այստեղ տեղից դուրս ցատկեց Սուրեն Հարությունյանը եւ հայտարարեց այն մասին, որ «Նաիրիտը» փակվում է...

էջ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ...



ՍՈՑԻՈՒՄ

Հայաստանյան կազմակերպություններին բնորոշ են բղբարարությունը, քաշքշուկը, երբեմն ուղեկցվելով բարոյական չափանիշների ոտնահարմամբ եւ վանդալականությամբ:

էջ 6

ԹԱՄԱՆՅԱՆԻ «ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ»...

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Ցավոք, Թամանյանի հետնորդները Երեւանի կառուցապատումը դուրս բերեցին թամանյանական նախատեսած ուղեծրից...

էջ 9

պաշտոնական

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Երեկ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը:

Զրույցի ընթացքում նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, պատասխանելով հյուրերին հետաքրքրող հարցերին, մասնավորապես ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման Հայաստանի դիրքորոշումը եւ Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման հնարավորությունները:

Հայաստանի ներքին խնդիրներին ու նվաճումներին վերաբերող հարցին պատասխանելով, նախագահը կարեւորեց ժողովրդի ծանր սոցիալական վիճակը, այն, որ մեկ միլիոն մարդ այսօր Հայաստանում չքավոր է, գործ աշխատավարձ է ստանում, ապահովված չէ աշխատանքով: Որպես նվաճում նախագահը նշեց տնտեսական շինարարության ընթացքը եւ ներքին կայունությունը:

Արմենպրես

Արվեստ

«Երբ դուք երկուսին կդարձնեք մեկ. եւ երբ դուք ներսի կողմը կդարձնեք ինչպես արտաքին կողմ. եւ վերեւի կողմը՝ ինչպես ներքեւի... կողմ, երբ դուք աչքի փոխարեն աչքեր կստեղծեք. եւ ձեռք՝ ձեռքի փոխարեն. եւ ոտք՝ ոտքի փոխարեն. կերպար՝ կերպարի փոխարեն. այնժամ դուք արքայություն կմտնեք»:

Ավետարան ըստ Թովմասի

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐՆ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ Է

Նորը միշտ կանչում, ձգում ու թեզ տարածության վրա է պահում: Այդ բացակը տարիների ընթացքում է փորանում: Արվեստագետը ճանաչում է նման իրավիճակը, եւ ժողովուրդն էլ է ճանաչում ի վերջո: Այս՝ գուցեեւ ողբերգությունը, որպես հիվանդություն, տարբեր կերպ են տանում ժամանակակից անհատները՝ արվեստագետները, գիտնականները, քաղաքագետները: Թող նրանց արիության պտուղը չհատնի:

Ռուդոլֆ Խաչատրյան նկարիչը խիզախել է: Նա կերպարվեստի մեր պատկերացումների սահմանը շարժել է առաջ, ու իր ծայնի, պահվածքի, հայացքի մեջ դողդոջում մի ելեւէջ էլ չես նկատի: Մարդը տիեզերքի դիմաց: Հայը՝ դուրս եկած իր տնից ու տան կարոտով (ինֆարկտի ցավերով):

Աշխարհը վախենալու չէ: Անգլիայում, ԲՈՒՀ-երի ուսումնական ձեռնարկներում՝ թե ինչպես պետք է նկարել, ընդգրկված են նաեւ նրա երեք աշխատանքները: Մալթայում վերջին 200 տարվա գրաֆիկական գործերի ցուցահանդեսում Գոյայի հետ ներկայացվում է նաեւ մեր եղբայրը: Հպարտանանք, մոտ գանք ու տեսնենք... Չլինի իր վարպետ Երվանդ Քոչարի թերհասկացվածությունն ունենա: Ինքը վստահ ասում է՝ դու, եթե նոր բան ես ուզում անես, կրողը պիտի լինես աշխարհի մշակույթի: Պակասդ պիտի լրացնես, միշտ: Այլապես չես իմանա, ինչ ես բերում քո աշխարհով: Ինքը ժամանակն է մտցնում կերպարվեստ եւ մոտ 16 նշանակալի հայտնագործություն: «Արմենիա» հյուրանոցի իր համարում զրուցել, ներքեւում սուրճ ըմպել եւ ուղղվում էինք Պատկերասրահ: Ռուդոլֆ Խաչատրյանին տեսնելով, մարմնեղ թավջութակահարը ողջունեց՝ ինչ-որ բան նվագելով, ուսանողուհիները վազ տվեցին՝ ինքնագրի համար, իսկ ցուցասարհում շատերն էին սպասում... Նման ուրախությունն առույգացնում է...

- Ներեցեք, դուք երեւանցի եք եւ հյուր չեք այս քաղաքում: Ինչպե՞ս է, որ «Արմենիայում» եք տեղավորվել: Դո՞ւք էլ եք շատերի նման վաճառել ձեր տունն ու հեռացել Հայաստանից:

- Ես 27 տարի առաջ եմ մեկնել Մոսկվա՝ իմ երկրորդ կնոջ մոտ: Ամեն ինչ թողել եմ առաջին կնոջս ու գնացել:

- Երեխաներ ունե՞ք:

- Ո՞նց չէ, ես պապ եմ: Երեք աղջիկ ու մի տղա ունեմ: Նրանք էլ ունեն երեք աղջիկ ու մի տղա: Այ, փոքր աղջիկս էլ կամուսնանա, եւ թոռներս կլցանան:

- Վերջին անգամ ե՞րբ եք ցուցադրվել Հայաստանում:

- 1988-ին. էն ծանր հոգեմաշ օրերին:

- Դա մարդկային հակադրությո՞ւն համարենք՝ անհրավ վիճակին:

- Ես իմ գործն եմ անում: Ամեն մի լուրջ արվեստի մեջ ամեն ինչ կա՝ եւ ազգային, եւ մարդկային, բայց մտացածին ոչինչ չեմ անում: Մարդիկ ելույթ էին ունենում Ազատության հրապարակում, հետո գալիս էին ցուցահանդես: Հանգստանում էին երեւի: Ինչ-որ բան էին ապրում, որն իրենց խաղաղեցնում էր: Տպավորությունների գրքում շոյող շատ լավ խոսքեր կան գրված...

- Իսկ այս նոր ցուցահանդեսն ինչպե՞ս են ընդունում:

- Այսպիսի ընդունելություն չէի պատկերացնում, մանավանդ որ, մեծ մասն ինձ ճանաչում է իմ դասական գործերով: Ես մտավախություն չունեի, պարզապես ուզում էի հասկանալի լինել: Բացման օրն ինձ ապշեցրեց. հայացքների ջերմություն, հոգեկան մերձություն: Այդքան հուզված չեմ եղել կյանքում:

- Զարմանալի չէ՞, որ «աբստրակտ» նկարչությունը նման վերաբերմունքի է արժանանում: Ուրախալի մտորման փաստ է սա:

- Իմ արվեստն աբստրակտ չէ: Այնտեղ աբստրակտ տարրեր կան: Ընդհանրապես ամեն մի լուրջ արվեստ, մեծ արվեստ,- ես սա համարձակ եմ ասում,- իր մեջ կրում է ամեն ինչ: Որովհետեւ դա կապված է աշխարհի հետ, մարդու հետ, ժամանակի հետ: Այս ցուցահանդեսը նման մի փոքրիկ երեւույթ է:

- Դուք ինչպե՞ս կձեւակերպեք արվեստը:

- Միֆ: Մեծ արվեստները միշտ էլ միֆ են եղել, դիցաբանություն: Գնանք Եգիպտոս: Ինչը ստեղծվել է այնտեղ, ոչ մի տեղ չի ստեղծվի այլեւս: Ենթադրվում է, որ նրանք եկվորներ են եղել, տիեզերքից, որովհետեւ բացառիկ բաներ ունեն, որ անբացատրելի է... կամ մայա ցեղի արվեստը, որ շատ եմ սիրում:

- Շատերի համար գաղտնիքը դեռ նոր է բացվելու...

- Այսպես ասած, հասարակ մարդը գուցե չի հասկանում, բայց զգում է, հավատում: Այ, դա է ամենաշատն ինձ ջերմացնում: Ի վերջո, ամենակարեւորն իմ ժողովրդի գնահատականն է: Ես հաղթանակել եմ թե՛ Անգլիայում, թե՛ Ռուսաստանում, թե՛ Ամերիկայում: Ինձ հովանավորում է ֆրանսիացի, աշխարհի ամենամեծ կոլեկցիոներներից մեկը, նա պիտի թանգարան հիմնի, ինչպես Տրետյակովը, բայց արդի art-է գնում, ինձնից: Մնում է աշխատել ու աշխատել. միայն առողջություն լինի...

- Գուցե փոքր-ինչ բացատրզեիք «բազմաչափ օբյեկտի» չափումները...

- Նկարչության մեջ մտավ չորրորդը՝ ժամանակը: Բացի այդ, այնտեղ կան նուրբ, բազմաշերտ դիցաբանական գաղափարներ: Օրինակ, իմ օբյեկտը չունի աջ ու ձախ, վերեւ ու ներքեւ, բոլոր առանցքների վրա կարող է պտտվել, անվերջ փոփոխվել: Իմ վարպետ Երվանդ Քոչարի նկարչությունը բաց տարածության մեջ է, մի՛ հարթության վրա է եւ պտտվում է մի՛ առանցքի շուրջ: Շրջելուց գլխիվայր կդիտվի: Իսկ տիեզերքը չունի իմ թվարկած կոորդինատները: Ես ստեղծել եմ մի բանաձեւ, որը ներառում է վաղնջական ժամանակներից եկած երկվորյակների, հայելատիպության, խաչի, սվերի գաղափարները: Տեսեք, սվերն անցնում է, բայց ի՞նչ է այն: Ինքն էլ է կապվում, մասնակցում:

- Իսկ համադրական իմաստով ո՞րն է նորույթը:

- Ես ստեղծել եմ ճարտարապետական մի կառուցվածք, որտեղ մտնում են արձանագործությունը, գեղանկարչությունը եւ գծանկարչությունը: Դրանք դաշն են, ինչպես եկեղեցին՝ իր որմնանկարներով, որմնահանդակներով... Տրանք իրար կապված են շարժման, տարածության, չորրորդ չափումի գաղափարով: Վերջինիս վրա շատերն են տքնել ու տառապել:

- Փաստորեն մենք գործ ունենք ոչ թե բարեփոխիչի, այլ նորարարի՞ հետ:

- Ուչելլոն եւ Վան Էյկը գեղանկարչության մեջ մտցրին խորության գաղափարը: Յուղաներկն այդ նպատակի համար ի հայտ եկավ: Եվ հաղթանակեց հեռանկարը:

Իսկ ժամանա՞կը՝ ամենահզորը: Մենք ոչ թե հարթության, այլ տարածության մեջ ենք մտածում: Էյնշտեյնը բերեց իր հարաբերականության տեսությունը, ուրեմն՝ արվեստն էլ պետք է ունենա: Այսինքն՝ պետք է պտտվի, շարժվի, որ ժամանակը կանգ չառնի: Ոչ թե մի որեւէ իր, ասենք, սկահակ է պտտվում, այլ այդ օբյեկտը փոփոխվում է: Այստեղ է գաղտնիքը. ես նոր մարդու կերպարն եմ ստեղծել...

-Ինչպիսի՞ կատեգորիա է առագան Ձեզ համար:

- Այն, ինչը ես եմ անում, առագան դա է... Ես ամենաառաջավոր նկարիչն եմ աշխարհում: Համարձակորեն եմ ասում:

- Եթե ես ճիշտ հասկացա, դուք խոսում եք անսկզբի, անվերջի, վերժամանակայինի մասին...

- Ես ստեղծել եմ գնդի գաղափարը, որի բոլոր կետերը պտտվում են եւ որոնց բոլոր գործողությունները տարբեր են...

Երբեմն զարմանում եմ, թե ինչպես հասա դրան... Բայց ի՛մ Աստծո հավատով, նվիրվածությամբ, ազնվորեն... Առանց Աստծո ոչինչ չի լինում:

- Աստված, ըստ Ձեզ, մարմնավորվա՞ծ է, թե անպարփակն է...

- Անպարփակն է, բայց միաժամանակ ամենուր է: Քրիստոսն է ասել, չէ՞, բարձրացրու այն քարը եւ ինձ այնտեղ կտեսնես:

Ասում են անաստված մարդ: Այսինքն՝ կամ քո մեջ է, կամ չկա...

- Ինձ մեղրահացի բջիջ են հիշեցնում Ձեր նկարների խոռոչները...

- Դա բանաձեւի երեւույթն է եւ ռեալիստական չի կարող լինել: Ես զարգացրել եմ Մուրի, Գարգալոյի, Քոչարի եւ այլոց մտածելակերպը: Բերել-հասցրել եմ բազմաչափ օբյեկտին: Այդպիսի խոռոչներ Գեղարդի վանքում էլ կան չէ՞. մտնում-խորանում ես եւ դեմդ՝ եկեղեցի՞ է...

- Մանիֆեստային են հնչում Ձեր խոսքերը:

- Այդպես էլ կարող եք գրել: Իմ կատալոգի նախաբանն իմ մանիֆեստն է, ինչպես Ա. Բրետոնն ունի «Սյուրռեալիզմի մանիֆեստը», Պիկասոն՝ կուբիզմինը, Մոնեն՝ իմպրեսիոնիզմինը... Իմը 21-րդ դարի մտածելակերպն է. ես շրջա առ շրջա եմ հասել այդ օբյեկտին եւ գեղեցիկ ձեւով եմ ցույց տալիս այդ: Սա անվերջանալի կյանքն է՝ երեկը, այսօրը, վաղը փոխկապակցված են: Այդպես է ասում Դմիտրի Սարավյանովը, ում՝ միակին նախկին ԽՍՀՄ-ից, ընդունում է աշխարհը: Նա համաշխարհային աճուրդներում հրավիրվում է որպես փորձագետ: Եվ չի գրում ժամանակակիցների մասին. ես բացառություն եմ:

- Ձեր վաղ շրջանն իմացողները կարո՞ղ են մտածել, որ դուք կտրուկ շրջադարձ եք կատարել...

- Ինչքան էլ մենք լավ նկարենք բնությունը, մենք Աստծո ստեղծածն ենք ընդօրինակում: Դու կարող ես հանճարեղ լինել, բայց ոչ արարիչ: Իմ կատարածը բնության մեջ չկա. այն արարչագործություն է: Դա գալիս է մտածական, հասկացվածի աշխարհից: Կերպարվեստում դա գեղեցիկ է, պլաստիկ, մինչդեռ իրական տեսքով՝ հրեշավոր կլիներ:

Իմ ալբոմում 1958-72-ը դասակարգություն է: 15 տարի: Ինչ է, 15 տարի Ռուդոլֆ Խաչատրյանը մեռա՞ծ էր: Ես ի՞նձ եմ վերադառնում, ես չեմ հորինում եւ ինձ վերադառնալով եմ փոխվել:

- Որպես բազմաչափ օբյեկտ... Ներեցեք, անմահության խաղ զգո՞ւմ եք, ինչպես բոլոր մահկանացուները:

- Մեզ փոքրուց վախեցնում են, որ մահ կա: Մինչդեռ կերպափոխության ես ենթարկվում... Ի սկզբանե էր Բանը եւ այն Աստծո մոտ էր եւ այդ Բանը անվերջանալի է...

- Դուք չարի եւ բարու հաշտեցման եք գնում կարծես ...

- Ոչ: Բարին է միշտ հաղթանակում: Ես, օրինակ, շատ շնորհակալ եմ ինձ չար կամեցողներից: Նրանք ինձ շատ մեծ ուժ տվեցին՝ փորձելով վնասել: Նրանք գրգռում են ուղեղս, միտքս, որ էլ ավելի թեւերս բարձրացնեմ: Դա կյանքի շարժումն է:

- Հայաստանո՞ւմ են նրանք:

- Գլխավորապես:

- Ի՞նչն է պատճառը:

- Մեզ շատ են հարվածել՝ մենք պաշտպանվել ենք: Մենք կոմպլեքսներ ենք ձեռք բերել: Բայց, ի վերջո, կարողացանք չկորցնել մեր պետությունը: Այն կա:

- Հայաստանն ինքնիշխան, անկախ պետություն է:

- Բայց մեկուսացումը կործանարար կլինի: Ռուսաստանի հետ լավ պայմանագիր կնքվեց վերջերս: Տեսնենք: Մենք պիտի բարեկամ լինենք Ռուսաստանի հետ:

- Ո՞րն է մեր ժողովրդի համար առանձնահատուկը. Դուք երկար տարիներ դրսում եք եղել եւ կարողացել եք դիտարկել ուրիշներին:

- Մերը մասշտաբն է, չափը, համամասնությունը... մեր եկեղեցիների նման: Մենք գիտության եւ արվեստի ազգ ենք եւ դրանցով պիտի ապրենք: Կանդինսկին, Շագալը հեղափոխության ժամանակ եթե չգնային, հիմա ռուսները կվաճառեին նրանց նկարներն ու կիսարտանային:

- Քաղաքականության մեջ նոր-նոր ենք հմտանում: Մինչ այդ ուրիշներն են մտածել մեր փոխարեն:

- Դրա որակավորումը տվել են,- մի օր այսպես է, մի օր ուրիշ կերպ: Պետք է այնման խելոք լինես, որ ընտրես ճիշտ ճանապարհը: Ասում են, Լեւոն Տեր-Պետրոսյանը լավ քաղաքագետ է: Գուցեեւ:

- Դուք կվերադառնա՞ք Հայաստան:

- Ես ինձ համարում եմ աշխարհի մարդ: Հայրենիքս ինձնից դուրս չի կարող լինել: Ինչո՞ւ աշխարհից կտրվեմ: Բայց հայրենիքում ուզում եմ իմ օջախն ունենալ, որտեղ կհավաքվեն իմ սիրելի նկարները, որոնք չեմ վաճառելու: Այդ ձեռնարկս խանգարեցին 1988-ին, իմ չարակամները: Թեեւ էլի շնորհակալ եմ այդ մարդուն, որը խանգարեց, որ ես գնայի Լոնդոն եւ ստեղծեի այն, ինչը գուցե տեղում չկարողանայի: Սա է իմ ճակատագիրը: Ես իմ ճանապարհի տերն եմ: Տարվա մի մասը Լոնդոնում, մի մասը Մոսկվայում, մի մասը հայրենիքում: Այս փոփոխությունն ինձ մեծ ուժ է բերում:

- Տա Աստված, որ ջերմանաք հայրենի օջախում:

Շնորհակալություն զրույցի համար:

ՇԱՆԹ ՄԿՐՏՉՅԱՆ

Rudolf Khachatryan Digital Archive · https://rudolfart.com/publications/Pub-0215?lang=en

Rudolf Khachatryan (1937–2007)

Rudolf Khachatryan Digital Archive · rudolfart.com

The Most Important Thing Is the Opinion of My People

This file was downloaded from:
https://rudolfart.com/publications/Pub-0215?lang=en

Works by Rudolf Khachatryan © Heirs of Rudolf Khachatryan. Other texts, photographs and design © their respective authors. When using this material, please credit the source and link to the page above.

Рудольф Хачатрян (1937–2007)

Цифровой архив Рудольфа Хачатряна · rudolfart.com

Самое главное — мнение моего народа

Файл скачан со страницы:
https://rudolfart.com/publications/Pub-0215?lang=ru

Произведения Рудольфа Хачатряна © наследники Рудольфа Хачатряна. Остальные тексты, фотографии и оформление © их авторы. При использовании материала укажите источник и